*Աշոտ Ներսիսյան*

# Ղարաբաղյան հակամարտությունը շահագրգիռ տերությունների քաղաքական հաշվարկներում

Արդեն ժամանակն է բացահայտ պնդելու, որ խաբուսիկ են ղարաբաղյան կոնֆլիկտի շուտափույթ լուծման բոլոր ցանկությունները կլինեն դրանք մեծ տերությունների կամ հայոց և ադրբեջանցիների, որ շարունակվելու է ինչպես պատերազմը հանուն Ղարբաղի ազատության և անկախության՝ մի կողմից և հանուն նրա նվաճման՝ մյուս կողմից, այնպես էլ խաղաղության երազների այն համոզմունքի ամրապնդմամբ ընթացող փնտրտուքը, ըստ որի ցանկալի խաղաղությանը հասնելու ամենահիմնական միջոցը հաղթական պատերազմն է: Այսօր, երբ մեր մեջ տակավին իշխում է ղարաբաղյան խնդրում շահելու հույսը, առավել քան ավելորդ են դառնում բոլոր այն դատողությունները, որոնց համաձայն ղարաբաղյան խնդիրը վերևից էր իջեցրած, և մենք միամտորեն փարվեցինք, պետք էր սկսել անկախության խնդրից և ոչ թե Ղարաբաղից, քանզի այդ խնդիրն ու անկախությունը անհամատեղելի են (կարծես թե ուժեղ Խորհ. Միության մեջ անկախության դրոշ պարզելը մեր գլխին գավազանի հարված չէր իջեցնի) և այլն: Մեր խնդիրն այժմ դա չէ, քանզի եղածն եղած է՝ իր թերություններով և առավելություններով հանդերձ, այլ այն, թե ինչպիսի գործելակերպ պետք է ընտրենք, որպեսզի չհանգեցնի վերջնական պարտության հանգրվանին: Իսկ նման գործելակերպ անհնար է, քանի դեռ, չմխրճելով քաղաքական կանխատեսումների ճշտության հարաբերականությունը, չենք ճշգրտել ղարաբաղյան կոնֆլիկտի տեղը շահագրգիռ տերությունների քաղաքական հաշվարկներում: Մեր խորին համոզմամբ բոլոր այդ տերությունների ղարաբաղյան կոնֆլիկտի ավարտի վերաբերյալ մշակված կամ ծրագրված տարբերակները վերջնական և կիրառելի չեն, և վստահորեն կարելի է պնդել դրանց լոկ ցանկություններ լինելու մասին և ոչինչ ավելի: Փորձենք դա ապացուցել այս կամ այն տերության քաղաքական շահերի առանցքին մոտավոր վերլուծականի ճանապարհով:

Առաջին: Ղարաբաղյան կոնֆլիկտը ԱՄՆ-ի և Արևմուտքի քաղաքական հաշվարկներում: Թեպետ հնարավոր է, որ առաջիկայում Արևմտյան Եվրոպայում հանդես գան ուժեր, որոնք ձգտեն ստեղծել ԱՄՆ-ի Թուրքիայում ծավալվելու ցանկությունների հակակշիռը, բայց այսօր Արևմուտքը հանդես է գալիս Ղարաբաղի շուրջ ԱՄՆ-ի ունեցած դիրքորոշման օգտին: Մի բան կասկածից վեր է, որ ԱՄՆ-ը Կովկասում խաղաղության հասնելու ջատագով է, բայց, անշուշտ, ոչ այնպիսի խաղաղության, որն անմիջական հետևանքը կարող է լինել Ռուսաստանում մեծապետական ուժերի հաղթանակի և որպես բռնապետ Կովկաս վերադարձին: ԱՄՆ-ն և Արևմուտքն այսօր ավելի շատ հակված են ղարաբաղյան կոնֆլիկտն ավարտված տեսնել ի վնաս հայոց և հօգուտ Ադրբեջանի, որն ինքնին նշանակում է հօգուտ Թուրքիայի, որը մեր հարևան երկրներից ԱՄՆ-ի այլընտրանքն է: Հաշվի առնելով իսլամական ֆունդամենտալիզմի գաղափարախոսության օրստօրե աճը և Իրանի, դեպի Արևելք տարածվելու ձգտումների առկայությունը, ԱՄՆ-ը, բնականաբար այլ ճանապարհ չունի նրա ազդեցության ուժեղացումը դիմակայելու համար: Անկախ որոշ քաղաքական տարաձայնություններից, Իրանը, Իրաքը և Սիրիան կազմում են այն քաղաքական առանցքի միջուկը, ընդդեմ որի ԱՄՆ-ի և Արևմուտքի հակազդեցություն ստեղծելու անհրաժեշտությունը ավելի ու ավելի այրող է դառնում: Մանավանդ որ «փոթորիկ անապատում» գործողությունից հետո Սադամ Հուսեյնի իշխանության գլուխ մնալու հանգամանքները ստիպում են ոչ լիարժեքորեն ճաշակել Բուշի հաղթանակի բերկրանքը: Այս բոլորից ելնելով պետք է շեշտել, որ ԱՄՆ-ի և Արևմուտքի ունեցած ղարաբաղյան կոնֆլիկտի ավարտի ձգտումները ընթանում են Ադրբեջանին բավարարելու ուղիով, քանի որ վերջինիս համար Ղարաբաղի վերջնական կորուստը կնշանակի Թուրքիո ազդեցության Ադրբեջանի վրա նվազում, որովհետև չի բացառվելու այնտեղ իրանամետ ուժերի ակտիվացումը: Այն հանգամանքը, որ Ղարաբաղը վերջերս մերժեց 3-1 համաձայնագիրը, կարող է ավելի մտահոգել այն վախով տառապողներին, որ նրա հետագա նման ընթացքը կարող է հանգեցնել բացահայտ և հակահայ միջամտության: Բայց, մեր խորին համոզմամբ, այդ միջամտությունն անհնար է, ԱՄՆ-ի նման առաքելությունը մնալու է լոկ ցանկություն: Եվ նա չի հրահրելու Թուրքիային բացահայտ միջամտության հետևյալ պատճառներով.

ա) Ղարաբաղի հայ տարրը գտնվում է իր ազատամտության ընթացքի այնպիսի փուլում, որ երբեք ականջալուր չի լինելու այն ցանկություններին և առաքելություններին, որոնց հետևանքը համաձայնագրերը չեն տալիս իր ազատության և ապրելու իրավունքի հիմնական և անհրաժեշտ երաշխիքները: Նա գտնվում է ազգային–ազատագրական պայքարի գաղափարախոսության զարգացման այն աստիճանի վրա, որը մահը գերադասելի է համարում նման զիջումներից:

*(Շարունակությունը 12 էջում)*

